

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 56-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանի կողմից հայտարարված գյուղատնտեսական նշանակության հողամասերից վարձակալությամբ հողատարածք տրամադրելու մրցույթը տեղի կունենա Արարատի մարզի Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23 փողոցի թիվ 62 հասցեում գտնվող Արտաշատի համայնքապետարանում 2023 թվականի հունվարի 13-ին ժամը 12-ին: Մրցույթի կրվի համայնքի սեփականությունը հանդիսացող, Արտաշատ համայնքի Նարեկ գյուղի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 56,66 հա մակերեսով հողամասը, որից 28,578 հա այլ հողատեսք, 28,082 հա արոտավայր:

Լոտ 1- 03-063-0329-0003 ծածկագրով 56,66 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամաս որից 28,578 հա այլ հողատեսք, 28,082 հա արոտավայր, տրամադրվող հողամասի վարձավճարի մեկնարկային գինը սահմանել տարեկան՝ 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ: Վարձակալության ժամկետը սահմանել 10/տաս/ տարի:

Մրցույթին մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերն են՝ անձը հաստատող փաստաթղթերը:
Մրցույթի մասնակցության վճարը կազմում է 15000 ՀՀ դրամ:
Մասնակցության տոմսի արժեքը կազմում է՝ 1000 ՀՀ դրամ:

Մրցույթի հայտերի, մասնակցության վճարների անդորագրերի, պահանջվող մյուս փաստաթղթերի ընդունումը կդադարեցվի մրցույթի նշանակման օրից 3 /երեք/ աշխատանքային օր առաջ՝ մինչև 2023 թվականի հունվարի 10-ը:

Առաջացած հարցերի և տեղեկությունների համար դիմել Արտաշատի համայնքապետարան մրցույթային հանձնաժողովին /կազմակերպչին/:
Հեռախոս՝ 091191151

Մրցույթավար՝ Համայնքի գլխավոր ճարտարապետ Վարդան Այվազյան
Արձանագրող՝ Համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Արամայիս Բաղայան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ